

ՀՏԴ

ՄՅԱՆ ԽԱՐԻՄԽԱՆԵՐԸ ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ամինիա Կանեցյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ սյունա-հեծանային կառուցվածք, կառուցվածքային տարրեր, տորաձև խարիսխների տիպեր, ատտիկական հիմնախարիսխների տիպեր, խոյակ, պաշտամունք, պալատ:

Շինությունների կառուցվածքային տարրերից կարևոր են սյունա-հեծանային համակարգերը, որոնք կրում են շինության ծածկերը: Դրանք օրդերային համակարգ են՝ բաղկացած խարսխից, սյան բնից ու խոյակից: Վերջին երկուսը պեղումներով սակավաթիվ են հայտնաբերված: Մույն աշխատության մեջ ուսումնասիրության առարկա են դարձել միայն խարիսխները: Հետագայում՝ նոր նյութերի հայտնաբերվելուց հետո, ուսումնասիրությունը կշարունակվի ամբողջ օրդերային համակարգի ընդգրկումով:

Նախաբան. Հայկական լեռնաշխարհին քարի մշակման բարձր արվեստը հայտնի էր դեռևս ուրարտական շրջանից, որը հելլենիստական մշակույթի ստեղծման ընթացքում հասել էր զարգացման բարձր աստիճանի: Հին Հայաստանի քարտաշները մեծ վարպետությամբ մշակում էին ճարտարապետական բարդ շինությունների մանրամասները՝ տարբեր ձևի խարիսխներ, ֆուստեր, բազմազան պրոֆիլներ, քիվեր, ինչպես նաև բարդ դետալներ:

Հայաստանում շինարարության մեջ շատ վաղ ժամանակներից տարածում է գտել սյունա-հեծանային կառուցվածքային համակարգը, որը հավասարաչափ օգտագործվել է ինչպես պաշտամունքային, պալատական (մոնումեն-

տալ), այդպես էլ բնակելի հասարակ կառույցների մեջ: Մյուսա-հեծանային կառուցվածքային համակարգն իր նախնական տարբերակներով օգտագործվում էր դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում (Շենգավիթ, Մեծամոր):

Այդ շրջանում, ինչպես նաև հետագա շարքային բնակատեղիների շինությունները պեղելու ընթացքում մենք հանդիպում ենք սյան հիմքերի, որոնց համար օգտագործվել է տեղական կիսամշակ քար, որի համեմատաբար հարթ կողմի վրա դրվել է սյան բունը: Այդպիսի խարիսխներ հանդիպում են Կարճաղբյուրում¹ (մ.թ.ա. III-ІІ-դդ.), Ջրափիում² (ուշ անտիկ, վաղ միջնադար) և այլ հնավայրերում: Այդպիսի կիսամշակ քարերից սյան հիմքեր (խարիսխներ) Հայաստանի տարածքում օգտագործվում էին, ինչպես նշվեց, սկսած երրորդ հազարամյակից և շարունակվում են կիրառվել միջև ուշ միջնադար, որտեղ նրանք հանդիպում են առավելապես շարքային բնակելի տներում [Աղ. I, նկ. 1]³:

Սյան բունը բնակելի տներում ավելի մատչելի և նպատակահարմար էր պատրաստել փայտից: Փայտյա սյան բները (ֆուստեր) քայքայումից պահպանելու և ծածկի ծանրությունը գետնին փոխանցելու համար սյան փայտե բները դրվում էին քարե հիմքերի վրա, որոնք իրենց ձևերով շատ տարբեր էին:

Բացի նկարագրված պարզունակ ձևից, արդեն վաղուրարտական ժամանակներից հին Հայաստանի ամբողջ տարածքում սյան հիմքերը՝ խարիսխները, ձեռք են բերում որոշակի ուրվապատկեր: Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ուրարտական հուշարձաններում (Արգիշտիխինիլի,⁴ Թեյշեբայինի, Էրեբունի⁵) հանդիպում ենք խարիսխների, որոնց հողին հպվող տակի հարթությունը կիսամշակ է թողնված, իսկ վերին մասը մաքուր է մշակված [Աղ. I, նկ. 2]: Սալից անցումը դեպի բարձր գլանաձև թմբուկը սահուն է [Աղ. I, նկ. 2, 3, 5]: Վերգետնյա մասը կազմում է 35-15 սմ: Ուշուրարտական ժամանակաշրջանում խարիսխների ներքին սալը /պլինտը/, մնալով կլոր, մշակվում է ավելի մաքուր, վերգետնյա մասի բարձրությունը ավելանում է [Աղ. I, նկ. 4]: Նշված խարիսխները պատրաստվում էին տեղական բազալտից կամ տուֆից: Ծագումնաբանորեն կապված լինելով ուրարտական շինարվեստի հետ և միաժամանակ հելլենիստական ժամանակաշրջանում կրելով հարևան երկրների ազդեցություններ՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում խարիսխները ձեռք են բերում յուրահատուկ և բազմազան հորինվածքներ:

¹ **Վարապետյան Բ. Ա.**, Կարճաղբյուրի պեղումները (1975-1978թթ.)//Պատմաբանասիրական հանդես, 3. 1979, էջ 271:

² **Канецян А.** Планировка жилого дома в Джрапи//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», II, Գյումրի, 1999, էջ 61-63:

³ Չափագրությունները և լուսանկարները կատարվել են հեղինակի կողմից:

⁴ **Ղաֆադարյան Վ.**, Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Եր., 1984, էջ 69, 105:

⁵ **Оганесян К.** Крепость Эребуни, Ер., 1980, стр. 30-42, рис. 24, 30, 32, 38, 37.

ՀՀ Շիրակի մարզում գտնվող Բենիամին հելլենիստական բնակատեղիում մոնումենտալ շինության պեղումների ժամանակ հայտնաբերվել են մ.թ.ա. VI - V դդ. պերսեպոլյան տիպի (զանգակաձև) խարիսխներ [Աղ. I, նկ. 6, 6a]⁶: Նույն շինության վերակառուցումից հետո՝ մ.թ.ա. IV–III դդ., ի հայտ են գալիս պրոտոտորաձև տիպի խարիսխներ, որոնց գեղարվեստական արտահայտչականության միջոցներում միատեղ օգտագործվել են փոքրասիական և աքեմենյան Պարսկաստանի մշակույթներին հատուկ տարրեր: Անտիկ շրջանի, ինչպես և նախորդ դարերի շարքային բնակատեղիների շինությունները պեղելու ժամանակ հանդիպում ենք անմշակ կամ կիսամշակ հիմքերի, օգտագործվել են նաև լավ մշակված տուֆե հենակներ, որոնք ունեն սեղանաձև կտրվածք:

Արդեն մ.թ.ա. II դարում ի հայտ է գալիս խարիսխի մի նոր հորինվածք, որը լայն տարածում է գտնում հելլենիստական Հայաստանի տարածքում: Դրանք տորաձև խարիսխներն են, որոնք հանդիսանում են արևելյան օրդերի հիմքը, երևույթ, որը տիպիկ ասիական է: Խարիսխների այդ ձևը պարզ է, նրանք հանդես են գալիս տարբեր համաչափություններով ու գեղարվեստական մշակումով և շարունակվում են մինչև ուշ միջնադար: Դրանք կերտված են ամբողջական քարից: Կազմված են սալից (պլինտից), ուղղանկյուն պատվանդանից և տորից՝ ոչ բարձր տակառաձև բարձիկից:

Հայաստանի տարածքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ տորաձև խարիսխներ: Դրանք ունեն տարբեր չափեր և կերտված են զանազան քարատեսակներից: Նշված խարիսխների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում տեսակավորելու և դասակարգելու դրանք՝ ըստ համաչափական և գեղարվեստական առանձնահատկությունների, որոնք էլ կարող են հիմք ծառայել շինությունների ճշգրիտ թվագրության համար: Պայմանավորված մշակման բարդությամբ՝ դրանք մեր կողմից բաժանվում են մի քանի տիպերի:

1-ի տիպը ամենապարզունակ տորաձև խարիսխներն են, որոնք կերտված են ամբողջական քարից և հիշեցնում են տոսկանական օրդերի խարիսխները: Այդ տիպի խարիսխները կազմված են քառակուսի տափակ մակերես ունեցող ստորին սալից՝ պլինտից և տորից [Աղ. II, նկ. 1]: Տորը երբեմն վերին մասում ունենում է նեղ ելուստ դարակիկ, որի վրա դրվում է սյան բունը (ֆուստը) [Աղ. II, նկ. 3, 5]: Այդ տիպի խարիսխների սալի չափերը տատանվում են 28 – 64 սմ, իսկ բարձրությունը՝ 9-28 սմ:

⁶ Тер-Мартиросов Ф. Ширак в эпоху классической античности // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, 1999, էջ 35-36:

Նմանատիպ խարիսխներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են Արտաշատում և Շիրազլուում (Արտաշատի արվարձան)⁷, Դվինում⁸, Արմավիրում⁹ (երկրորդ օգտագործման) [Աղ. II, նկ. 2, 2a, 3, 4, 5, 6a, 6], Բենիամինում¹⁰, Մոխրաբլուրում¹¹, Շիրակավանում¹², Ավանում¹³, Փայտակարանում,¹⁴ ինչպես և Էջմիածնում, Գառնիում, Սպիտակում (որտեղ երկու խարիսխներն ունեն նույն չափերը, հավանաբար պատկանել են նույն շինությանը): Երկու նմանօրինակ խարիսխներ են հայտնաբերվել պատմական Փարախոտում¹⁵ (Մենուախինիլի), որոնց պատկերները կան Կովկասի հնագիտության նյութերի լուսանկարներում: Եթե այդ տիպի արմավիրյան խարիսխները կերտված են բազալտից, ապա Արտաշատի, Շիրազլուի, Գառնիի, Դվինի, Շիրակավանի խարիսխները կերտված են մանրահատիկ կրաքարից, Էջմիածնինը՝ ավազաքարից, Ավանինը և Սպիտակինը՝ տարբեր երանգներով տուֆերից: Սակավաթիվ օրինակների վրա երևում է, որ խարիսխ կերտելու համար մեր նախնիները օգտագործում էին տարբեր տեսակի քարեր: Խարիսխների չափերը խիստ տարբեր են և կախված են օգտագործվող քարի տեսակից: Նմանատիպ խարիսխներ հանդիպում են մ.թ.ա. II-մ.թ. IIդդ. շերտերում [Աղ. II, նկ. 3, 4, 5, 5a]:

Երկրորդ տիպին պատկանում են այն տորածն խարիսխները, որոնց սալը ունի մեկ ցածր դարակիկ (2-6սմ.) [Աղ. III, նկ. 1]: Այդպիսի տորածն խարիսխներ շատ տարածված են հելլենիստական Հայաստանի տարածքում: Դրանց ուղղանկյուն սալի չափերը նույնպես տարբեր են և տատանվում են՝ 30 x 32 սմ-ից մինչև 70 x 70 սմ: Երկու այդպիսի խարիսխ բացվեց Արտաշատի առաջին բլուրի պեղումների ժամանակ [Աղ. III, նկ. 2, 3], պարսպապատին կցված շինությունում՝

⁷ **Аракелян Б.** Основные результаты раскопок древнего Арташата в 1970 -1973гг, ИФЖ, 1974, 4, стр. 43-60; **Kanetsian A.** Citta`einsediamentinell`All`Armeniadieta1 classica, Aipiedidell`Ararat, Artaxsatael`rmenia ellenistico-romana, acuradi Antonio Invernizzi: Casa Editrica LeLettere, Torino, 1998, p. 75-76, fig. 71.

⁸ **Քոչարյան Գ.**, Դվինը անտիկ դարաշրջանում// Դվին III, Եր., 1991, էջ 21-23, տախտ. VIII, նկ. 3, տախտ. IX:

⁹ **Կարապետյան Ի., Կանեցյան Ա.**, Արմավիրի 2002 և 2005թթ. պեղումները//Հին Հայաստանի մշակույթը XIVդ, Եր., 2002, էջ 161-168:

¹⁰ **Խաչատրյան Հ.**, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն II)//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 29-30:

¹¹ **Արեշյան Գ., Միմոնյան Հ., Սարգսյան Գ., Քոչարյան Գ., Օհանյան Հ.**, Հայագիտական կենտրոնի 1977-78թթ. դաշտային հնագիտական աշխատանքները//Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1979, էջ 207, նկ. 2:

¹² **Тер-Мартirosов Ф.** Ширак в эпоху классической античности, նշվ. աշխ., էջ 40:

¹³ **Демирханян А.** Северо-восток Еревана в эпоху арташесидов (фрагменты материальной и духовной культуры по данным античного поселения в Аван-Ариндже / II в. до н.э. – I в. н.э./, стр.10, табл.13.

¹⁴ **Иессен А.** Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА, 1965, 125, стр.125, рис.15,16.

¹⁵ Материалы по археологии Кавказа (экспедиция императорского Московского Археологического общества), М., 1911, вып. VI, стр. 39, рис. 22.

մ.թ.ա. II դարի շերտում: Դրանք, ինչպես և առաջին տիպի խարիսխները, պատրաստված էին մանրահատիկ կրաքարից: Նմանատիպ մեծ քանակությամբ խարիսխներ են հայտնաբերվել Շիրազլուից, որը գտնվում է հին Արտաշատի արևելյան ծայրամասում: Նույն տիպի խարիսխներ հայտնաբերվել են և Դվինում¹⁶, որոնցից մեկը պորֆիրիտից հիանալի մշակված է, քառակուսի պլինտով, օգտագործվել է նաև միջնադարում: Երկրորդ տիպի խարիսխներ հայտնաբերվել են նաև Էջմիածնում՝ ոչ հեռու առաջին տիպի խարիսխների հայտնաբերված վայրից: Դրանք պատրաստված են դեղնավուն տուֆից և սպիտակ կրաքարից: Նույն տիպի սպիտակ կրաքարից խարիսխներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են Շիրակավանում և թվագրվում են մ.թ. II դարով: Նույն տարածաշրջանում գտնվող Կապսի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նման տիպի չորս բազալտե խարիսխներ: Եղեգնաձորի գավառական թանգարանում ցուցադրված են Ելփին գյուղից հայտնաբերված, հիանալի մշակումով երկու խարիսխ՝ սպիտակադեղնավուն օնիքսից, քառակուսի պլինտով [Աղ. III, նկ. 4]:

Նկարագրվածից պարզ է դառնում, որ երկու տիպերի խարիսխները պատրաստված են տեղական տարբեր քարերից, տարբեր չափեր ունեն և պատկանում են մ.թ.ա. II դարին:

Հայտնաբերվել են նաև երկու տորաձև խարիսխներ՝ մեկ դարակիկով, որոնք ունեն դեկորատիվ մասնիկ [Աղ. III, նկ. 5, 6]: Դրանք, ինչպես և Արտաշատի բոլոր խարիսխները, պատրաստված են մանրահատիկ կրաքարից և լավ մշակված են: Առաջին խարիսխը հայտնաբերվել է Շիրազլուի դամբարանադաշտում: Սալը (պլինտը) քառանկյուն է 40 x 40սմ, բարձրությունը՝ 7 սմ: Կտրվածքում սալը սեղանաձև է [Աղ. III, նկ. 5], վերին քառակուսու չափերն են 36 x 36 սմ, դարակիկի չափերը՝ 2 սմ, տորը՝ 6սմ: Տորի վերին մասը զարդարված է հյուսածո պարանաձև գոտիով, դրանից վեր տեղադրված է տորի դարակիկը: Ինչպես գոտու, այդպես էլ դարակիկի բարձրությունը 1,5սմ է, դարակիկի տրամագիծը՝ 22 սմ: Նույն տիպի հյուսածո պարանով զարդարված, սպիտակ մանրահատիկ կրաքարից խարիսխ հայտնաբերվել է Մարտակերտի շրջանում և պահվում է Ստեփանակերտի թանգարանում [Աղ. III, նկ 7]: Սալը ուղղանկյուն է՝ 52 x 46 սմ չափերով, սալի բարձրությունը՝ 22 սմ, դարակիկի բարձրությունը՝ 2,5 սմ, տորի բարձրությունը՝ 10սմ, իսկ պարանաձև հյուսվածքը և վերնի դարակիկը ունեն 2-ական սմ բարձրություն: Տորի վերնի տրամագիծը 28սմ է: Վերջերս այդ տիպի բազալտից խարիսխ պատահական հայտնաբերվել է Արտաշատից (նկ. 13):

Երրորդ տիպին են պատկանում այն խարիսխները, որոնց սալիկներն ունեն տեսքը (պրոֆիլավորումը) հարստացնող երկու դարակիկներ [Աղ. III, նկ. 8]:

¹⁶ **Քոչարյան Գ.**, Դվինը անտիկ դարաշրջանում, նշվ. աշխ., տախտ. VIII, IX:

Երրորդ տիպի խարիսխներ քիչ են գտնվել: Դրանցից մեկը հայտնաբերված է Արտաշատում [Աղ. III, նկ. 8, 9]. պատրաստված է սպիտակ մանրահատիկ կրաքարից և ունի հետևյալ պարամետրերը. սալը քառակուսի է (42 x 42սմ), բարձրությունը՝ 7,5 սմ, ամեն մի դարակիկի բարձրությունը՝ 3,5 սմ, տորի բարձրությունը՝ 7,5 սմ, տորի վերին մասում նույնպես բարձրանում են երկու դարակիկ, վերևի դարակիկի տրամագիծը 27 սմ է, իսկ ներքևինինը՝ 29 սմ, տորի լայն մասի տրամագիծը 40 սմ է:

Երկու դարակիկով խարիսխ հայտնաբերվել է նաև Սիսիանի¹⁷ դամբարանում [Աղ. III, նկ. 9]: Այդ խարիսխը պատրաստված է բազալտից, ունի ուղղանկյուն, քիչ երկայնավուն սալ՝ 1,25 մ երկարությամբ, 0,70 մ լայնությամբ և 13սմ բարձրությամբ: Նրա միջին մասում բարձրանում է առաջին քառակուսի դարակիկը (59 x 59սմ): Առաջին դարակիկի բարձրությունը 6սմ է, երկրորդինը՝ 3սմ: Երկրորդ դարակի քառակուսին 53 x 53սմ է, իսկ տորի լայն մասի տրամագիծը՝ 48 սմ: Տորի վերին տրամագիծն 33սմ է: Այդ խարիսխի վերևի դարակիկի բարձրությունը՝ 1,5 սմ:

Նույն տիպի երկու դարակիկներով խարիսխներ հայտնաբերվել են նաև Բենիամինում¹⁸ [Աղ. III, նկ. 10], բայց այստեղ այդ դարակիկների միջին մասերն ունեն խորություն (ներճկված կողերով եռաստիճան ձև): Ներքնասալերը (պլինտ) ունեն միջինը 65 x 72 սմ չափեր, աստիճանների ներճկվածքի խորությունը 2,5-3սմ է, նույնքան է նաև աստիճանների (դարակների) բարձրությունը: Տորերի միջին բարձրությունը 10-12 սմ է, տրամագիծը՝ 40 սմ, վերին օղակի տրամագիծը՝ 24 - 25սմ:

Բացի վեր նշված խարիսխներից, Արտաշատում¹⁹ հայտնաբերվել են չորս խարիսխ, առանց դարակիկի, բայց սալի երկու հակադիր կողմերում՝ տորի տակ, ունեն մեկական ուռուցիկ ելուստներ: Այդ խարիսխները նույնպես մանրահատիկ կրաքարից են պատրաստված, իսկ սալերն ունեն անկանոն ձև: Բարձրությունները հետևյալն են՝ 27,18,13սմ, ունեն խիստ տափակ տոր [Աղ. III, նկ. 11, 12, 13,14]:

Այդպիսով, տորաձև խարիսխները ի հայտ են գալիս միայն մ.թ.ա IIդ. (պեղումների տվյալներով) և լայնորեն տարածվում են պատմական Հայաստանի տարածքով՝ շարունակվելով և փոքր փոփոխություններով օգտագործվել նաև

¹⁷ **Խաչատրյան Շ.**, Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես), Եր., 2009, էջ 12, աղ. 1:

¹⁸ **Խաչատրյան Հ.**, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն 1) // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, 1999, էջ 49, նկ. 5:

¹⁹ **Kanetsian A. G.** Citta` e insediamenti nell` Armenia di eta` classica, նշվ.աշխ. էջ 81, fig. 87.

միջնադարում: Արարատյան դաշտավայրում, Շիրակում (Շիրակավան, Բենիամին, Կապս) և Գուգարքում (Սպիտակ) երեք տիպի խարխիսներից էլ հայտնաբերվել են: Բոլոր խարխիսները տարբեր չափերի են: Տորերի վերին տրամագծերը, որոնց վրա տեղադրվում է սյան բունը, խիստ փոփոխական են: Արտաշատում հայտնաբերված առաջին տիպի խարխիսների վերին տրամագիծը տատանվում է 56-ից մինչև 28սմ: Խարխիսներից մեկն ունի նույնիսկ 19սմ տրամագիծ: Արմավիրում հայտնաբերված այդ տիպի խարխիսներն ունեն 55սմ տրամագիծ, իսկ Սպիտակի հուշարձանի տուֆե խարխիսները՝ 68սմ:

Երկրորդ տիպի խարխիսների նույն տրամագիծը տատանվում է 40-ից 20սմ-ի միջև: Այս խարխիսներից շատերը տորի վերին մասում ունեն ոչ մեծ ուղղանկյուն փոսիկներ, որոնք օգտագործվում են խարխիսը սյան բնի (ֆուստի) հետ կապելու նպատակով՝ անկախ այն բանից՝ փայտից է սյան բունը, թե քարից:

Խարխիսներն իրենց տարբեր ձևերով տարածված էին նաև պատմական Աղվանքի տարածքում. մ.թ.ա. II դ.՝ Շամխորում, Շամախիում, Ֆիզուլիում, Թագաբենդում և Կարալայում²⁰: Ուշագրավ են նաև մ.թ. I դարով թվագրվող խարխիսները՝ հայտնաբերված Արսամեյա քաղաքի պեղումների ժամանակ: Քաղաքը գտնվում է հարևան Կոմմագենում, Նյումֆայոս²¹ գետի ափին:

Տորաձև խարխիսները բնորոշ են նաև պարթևական ճարտարապետությանը (Խատրա, Նիսա)²² և Բակտրիայի (Այրթամ, Խատին-Ռաբաթ, Հին Թերմեզ, Խալչայան, Ուշտումբուլան, Քոբադիան)²³, որտեղ դրանք թվագրվում են մ.թ.ա. III-մ.թ. III դարերով: Տորաձև խարխիսներ են հայտնաբերվել նաև Հյուսիսային Աֆղանստանի Դելբերջին²⁴ քաղաքում:

Տորաձև խարխիսները լայն կիրառություն ունեին աքեմենյան ճարտարապետության մեջ: Այդպիսի խարխիսներ մ.թ.ա. VI-IV դդ. հանդիպում են Պերսեպոլիսում, մ.թ.ա. VI դ.՝ Պասարգադում, Նախշ-ի-Ռուստամում, Կուրխում, Բաստամում, Համադանում և Շաքաղում²⁵:

²⁰ Халилов Дж. Раскопки на городище Хыныслы, памятники древней Кавказской Албании, СА, 1962, 1, стр. 21, рис. 1,31; Халилов Дж., Бабаев И. О городах древней Кавказской Албании, СА, 1974, 4, стр. 103-106; Иессен А., Из исторического прошлого Мильско-Карабахской степи, նշվ. աշխ., էջ 33, 34, նկ. 15, 16:

²¹ Dörner F., Goell Th. Arsameia an Nymphaios, Berlin, Gabr.Mann, 1963, Fig. 39B, 41A, 42A.

²² Пугаченкова Г. Архитектурные памятники Нисы, // ТЮТАКЭ, 1949, том. I, с. 213, 214.

²³ Пугаченкова Г. Халчаян: К проблеме художественной культуры Северной Бактрии, Ташкент, 1966, стр. 48, рис. 25, стр. 62, рис. 37, 79; Пугаченкова Г. Из истории античной культуры Узбекистана, Ташкент, 1973, стр. 87-89; Пичикян И. Торовидные базы (происхождение, хронология), // Культура и искусство народов Средней Азии в древности и средневековье, М, 1979, стр. 60.

²⁴ Кругликова И. Дельбержин (раскопки 1970-1972 гг.), часть I, М, 1974, стр. 75, рис. 48.

²⁵ Pore A., Persian Architecture, London, Thames and Hudson, 1965, Fig. 6; Ruth A., Persian-achaemenid impact on Palestine, In: A Survey of Persian Art., London, New York, 1967, vol. 14, fig. 204-206; Archaeologische Mitteilun genaus Iran, Neue Folge, Band 5, Berlin, 1972, p. 198.

Տորաձև խարիսխները ծագումնաբանորեն կապված են արևելյան օրդերի հետ, որը գուտ ասիական երևույթ է: Դրանք սկիզբ են առնում մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսից: Ինչպես իրավացիորեն նշում է Խ. Գալը²⁶, ասորեստանյան և ուրարտական նախասրահի (portik) բազալտից պատրաստված խարիսխները համանման են Իրանի Քուրդիստանի նախատորաձև խարիսխներին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ արևելյան օրդերի հիմքերը հարկավոր է փնտրել ասորեստանյան և վաղուրարտական ճարտարապետության տարածման շրջանում:

Ըստ երևույթին նախատորաձև և տորաձև խարիսխների միջանկյալ օղակը Պաֆլագոնյայի խարիսխներն են (Ժայռափոր դամբարան Գամբարքայայում մ.թ.ա. VIIIդ. վերջ)²⁷: Նույն շարքին, ըստ Խ.Գալի, կարելի է դասել Քուր-ու-Քիյումի դամբարաններից գտնված մ.թ.ա. Vդ. կիսատաշ խարիսխները:

Հայաստանում հայտնաբերված տորաձև խարիսխները մի փոքր տարբերվում են արեմենյան խարիսխներից: Տարբերությունն արտահայտված է առաջին հերթին տորի և սալի, ինչպես նաև սալի ու դարակիկի բարձրության չափերի հարաբերությունների մեջ: Եթե արեմենյան խարիսխներում սալի և դարակիկի բարձրությունները հավասար են, ապա հայկական տորաձև խարիսխների դարակիկը ունի ավելի փոքր բարձրություն:

Պատմական Հայաստանի տարածքում հայտնաբերված տորաձև խարիսխները տարբերվում են այլ երկրների նույնատիպ խարիսխներից նաև արտաքին ձևի նրբագեղությամբ: Դրանց ձևավորման ակունքները հարկավոր է փնտրել տեղական ավանդույթների մեջ: Արմավիրում հայտնաբերվել են երկու խարիսխներ, որոնք ձևով տարբերվում են մնացածներից: Մեկը տուֆից է՝ մշակված ուղղանկյուն սալով, որի տորը կտրվածքում սեղանաձև է, մյուսը խոշորահատիկ բազալտից է՝ շատ նման առաջինին, բայց տարբերվում է սալի մշակումով: Եթե առաջին խարսխի սալն ամբողջությամբ մշակված էր, ապա երկրորդ խարսխի սալի ներքևի մասը մշակված չի և կլորավուն ձև ունի: Այդ խարսխի սալի չմշակված մասը դրվում էր հողի մեջ: Նկարագրված խարիսխները իրենց համաչափություններով հիշեցնում են տորաձև խարիսխները, բայց այստեղ տորն ունի իր սկզբնական կոնաձև տեսքը:

Արմավիրի բլուրի շերտագրական ուսումնասիրությունը վկայում է, որ խարիսխներից մեկը (ուղղանկյուն լավ մշակված սալով) գտնվել է մ.թ.ա. IIդ.

²⁶ Gall H. Neue Beobachtungen zu den Sag.Medischen Felsgraben.-In: Proceedings of the Annual Symposium of Archaeological Research in Iran.Tehran, 1974, p. 31, Fig. 11,12.

²⁷ Всеобщая история архитектуры, том 1, Архитектура древнего мира 2-е изд., 1973, стр. 251, рис. 44.

գետաբարից պատրաստված հատակի տակ՝ ուրարտական երկրորդական օգտագործման խարիսխների հետ²⁸: Այստեղից կարելի է ենթադրել, որ այս խարիսխների օգտագործումը վերաբերում է աքեմենյան ժամանակներին: Դրանք շարունակում են գոյատևել մինչև մ.թ.ա II դ.՝ վաղ հելլենիստական շրջան: Ինչպես շերտագրական ուսումնասիրությունը, այդպես էլ այդ խարիսխների ձևերը հուշում են, որ դրանց ժամանակագրությունը վերաբերում է Ուրարտուից հելլենիզմ անցման փուլին:

Այդպիսով, պատմական Հայաստանի տարածքում դեռևս ուրարտական ժամանակներից փայտի կամ քարե սյուների տակ դրվում էին ձևավորված խարիսխներ, որոնք ունեին լավ մշակված գլանաձև վերնամաս, իսկ ներքևի մասը թողնված էր կիսամշակ, քանի որ դրվելու էր հողի մեջ: Ուշուրարտական խարիսխներին բնորոշ է անմիջապես հատակի վրա դրվող կլոր բարձիկի առկայությունը (Էրեբունի, Բաստամ)²⁹: Մ.թ.ա. IV-III դդ. ի հայտ են գալիս մշակված ուղղանկյուն սալերով խարիսխներ (Արմավիր), որոնք կտրվածքում սեղանաձև վերնամաս ունեն: Այդ խարիսխների վերին տրամագիծը ավելի մեծ է, քան սյան բնի տրամագիծը: Եվ վերջապես, հելլենիստական ժամանակներում ի հայտ են գալիս տորաձև խարիսխները, որտեղ կլոր բարձիկը նստած է ուղղանկյուն հիմքի վրա, որի դեպքում նեղանում է տորի վերին մասի տրամագիծը՝ հավասարվելով սյան բնին (Ֆուստին): Վերը նշվածից երևում է, որ տորաձև խարիսխների ձևավորումը պատմական Հայաստանում ընթանում էր տեղական ավանդույթների հիման վրա: Մ.թ.ա. II դ. տորաձև խարիսխների համապարփակ կիրառությունը Հայաստանի ամբողջ տարածքում կասկածանքի տեղիք չի տալիս, որ այդ տարրի ձևագոյացումը Հայաստանում կապված է նաև ավելի վաղ ժամանակների տեղական շինարվեստի հետ: Ցավոք, վաղհայկական հուշարձանները շատ քիչ են ուսումնասիրված:

Տորաձև խարիսխների կիրառությունը Հայաստանում շարունակվում է գոյատևել նաև՝ վաղ և՛ ուշ միջնադարում: Այստեղ դրանք ձեռք են բերում նոր համաչափություններ և մշակումներ՝ ստանալով նոր հարդարանք: Այդպիսի խարիսխներ հայտնաբերված են Դվինում, Եղվարդում, Զվարթնոցում³⁰:

²⁸ Тер-Мартirosов Ф. К стратиграфии Армавирского холма, // ВОН, 1974, 1, стр. 63.

²⁹ Оганесян К. Архитектура Эребуни, / Арин-берд I, АРА, 9, Ер., 1961, рис. 19.

³⁰ Մնացականյան Ս., Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները. Եր., 1971, էջ 242, գծ. 56: Քալանթարյան Ա., Դվինի կենտրոնական թաղամասի 1971 -1973թթ. պեղումները//Լրաբեր ՀԳ, 1975, 7, էջ 94, նկ. 2,3:

Բացի տորաձև խարիսխներից, Հայաստանի տարածքում հայտնաբերված են, այսպես կոչված, *ատտիկյան խարիսխներ* [Աղ. IV, նկ. 1]: Դրանք ներկայացված են Գառնիի տաճարի, Արտաշատի (նկ.19) և Դվինի (երկու խարիսխ) հուշարձաններում:

Հայտնաբերված ատտիկյան խարիսխները փոքր տարբերություններով մոտենում են խարիսխների դասական տիպին: Օրինակ, Դվինի³¹ տուֆից կերտված մի խարիսխը [Աղ. IV, նկ. 2] չունի պլինտի մաս և կազմված է երկու տորից: Առաջին և երկրորդ տորի միջև կան դարակիկներ, որոնց միջև առկա է սկոցիան (*скоция*), վերին տորն ունի դարակիկ՝ 1,50սմ չափով: Վերին տորի տրամագիծը 50սմ է: Այն փոքր է ներքևի տորից: Այս ձևը համապատասխանում է դասական նմուշներին: Դվինի երկրորդ խարիսխը [Աղ. IV, նկ. 3] չափերով մեծ է և ունի 14 սմ բարձրությամբ սալ, բայց կազմված է երեք տորերից, որոնցից առաջինի բարձրությունը 13սմ, երկրորդինը՝ 7սմ, իսկ երրորդինը՝ 6սմ: Տորի վերին տրամագիծը 62սմ է: Առաջին տորը նստած է սալի վրա: Բոլոր երեք տորերը իրարից անջատված են նեղ դարակիկներով (բարձրությունը՝ 3սմ) և ուղիղ գծով անցնող փորակով (*выкружка*): Տորերի միջև ընդհանուր բարձրությունը 10սմ է: Երկու խարիսխներում էլ ներքևի տրամագիծը ավելի մեծ է վերինինից:

Գառնիի հեթանոսական տաճարի սյան խարիսխները³² [Աղ. IV նկ. 4] իրենց տրամատներով /կողապատկերով/ շատ են նմանվում Դվինի առաջին խարիսխին, միայն այն տարբերությամբ, որ Գառնիի խարիսխն ունի սալ (բարձրությունը՝ 12սմ) և ավելի մեծ է. քառակուսի պլինտի չափը 106սմ է, վերին տորի տրամագիծը՝ 74սմ, ընդհանուր խարսխի բարձրությունը՝ 36սմ, երկու տորի միջին հեռավորությունը՝ 10սմ:

2004թ. Արտաշատում հայտնաբերված ատտիկյան խարիսխը [Աղ. IV, նկ. 5] իր պրոֆիլով (կողապատկեր) ավելի բարդ է: Այստեղ բացակայում է սալը, բայց խարիսխը կազմված է երեք տորից: Առաջին և երկրորդ տորերը նստած են իրար վրա, իսկ երկրորդի և երրորդի միջև կան երկու դարակիկ և սկոցիա: Երրորդ տորի տակ կա մի փոքր ելուստ: Առաջին տորն ունի սահուն անցում դեպի բարձրացող սյան մասը (19,5 սմ. տրամագծով), որի վրա նստած է եղել սյունը, ներքևի՝ երրորդ տորի տրամագիծը 29սմ է: Խարսխի վերևի և ներքևի հորիզոնական հարթությունների միջին մասերում կա քառակուսի կտրվածքով անցք (վերևում խորությունը՝ 6,6սմ, իսկ ներքևում՝ 8,5սմ.): Այդ անցքերի միջոցով խարիսխը ուղղահայաց կապվում էր սյան և հատակի հետ մետաղյա կամ փայտե ցցաձողով:

³¹ **Հարությունյան Վ.**, Դվին 1, Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Եր., 1950, էջ 94, նկ. 37,38:

³² **Санин А.** Архитектура античных сооружений Гарни, Ер.,1988, рис. 36.

Հայաստանում հայտնաբերված և նկարագրված ատտիկյան խարիսխները, ինչպես տեսնում ենք, նմանատիպ են հունական խարիսխներին: Ատտիկյան և տորաձև խարիսխները կիրառվում էին միաժամանակ:

Ատտիկյան սյան խարիսխները հայտնի են պարթևական հուշարձաններում (Շապուր, Խատրա, Աշուր, Դուրա-Եվրոպոս, ինչպես նաև Թերմեզ, Խալչայան, Կոբադիան, Այրտամ, Խատին-Ռաբաթ, Սուրխ-Կոտալ, Բեգրամ, Շոտարակ և այլն)³³: Պետք է նշել, որ Միջին Ասիայում հայտնաբերված խարիսխների վերին բարձիկները (ատտիկյան օրդերի արևելյան առանձնատիպ) ունեն գոտիներ, որոնք բացակայում են Գառնիի, Արտաշատի և Դվինի նույնատիպ խարիսխների վրա և ավելի հստակ են վերարտադրում դասական խարիսխի ձևը: Հունիական օրդերի ատտիկյան տարատեսակը ի հայտ է գալիս մ.թ.ա. 470թ. Դելփիքում: Այն վերջնական վերափոխման է ենթարկվում և ստանում իր ձևավորումը մ.թ.ա. V դ. երկրորդ կեսին բուն Ատտիկայում, Աթենքի Ակրոպոլիսում (Նիկեի Ապտերոսում տաճարում, Էրեխտեոնում, Պրոպեյլեոսի միջին օրդերում)³⁴: Արդեն մ.թ.ա. III-II դդ. Փոքր և Կենտրոնական Ասիայի տարածքում խարիսխների այդ տարատեսակը ստանում է լայն տարածում: Հարկավոր է նշել, որ ինչպես Վիտրուվիոսն³⁵ է ենթադրում՝ մ.թ.ա. III-մ.թ.ա. I դդ. ճարտարապետական հուշարձաններում հայտնաբերված ատտիկյան խարիսխների վրա պահպանված է կանոնիկ ձևը՝ երկու բարձիկ իրարից բաժանված դարակիկով և սկոցիայով³⁶: Այդպիսին են հեթանոսական Գառնիի տաճարի խարիսխները և մեկ խարիսխ Դվինից: Դվինի և Արտաշատի նոր հայտնաբերված խարիսխները կազմված են երեք բարձիկներից և դրանց անջատող երկու դարակիկներից ու փորակից (выкружка): Խարիսխների այդ ձևը շեղված է հելլենիստական ժամանակաշրջանում ընդունված վերոնշյալ կանոնիկությունից: Հետևաբար, Դվինի և Արտաշատի նշված խարիսխները կարելի է թվագրել ավելի ուշ ժամանակով՝ հավանաբար մ.թ. I դարով: Հարկ է նշել, որ վաղ միջնադարյան Հայաստանում այդպիսի խարիսխներ չեն հանդիպում: Մեր կարծիքով, Հայաստանում ատտիկյան խարիսխների ծագումը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել անցյալ դարի 60-ական թվականներին Դվինից հայտնաբերված մ.թ.ա. II- I դդ. թվագրվող երկու խարիսխները³⁷ [Աղ. IV, նկ. 6, 7, 8]: Այդ խարիսխները կազմված են 2 սմ միջանկյալ

³³ Пугаченкова Г. Архитектурные памятники Нисы, ТЮТАКЭ, 1949, т. 1, стр. 211-213; Пугаченкова Г., Пути развития Южного Туркменистана поры рабовладения и феодализма, ТЮТАКЭ, 1958, т. 6, стр. 262, рис. 7; Литвинский Б., Зеймаль М. Каменные базы колонн из Вахшской долины, Изв. отд. ОН АН Таджикистана, 1960, вып. 1(22), стр. 77, рис. 2.

³⁴ Пичикян И. Торевидные базы (происхождение, хронология), նշվ. աշխ., էջ 58:

³⁵ Витрувий Десять книг об архитектуре, М., 1936, стр. 28, III, 5,2.

³⁶ Маркузон В. Архитектура архаической эпохи (750-480гг. до н.э.), Всеобщая история архитектуры, М., 1973, стр. 40.

³⁷ Քոչարյան Գ., Դվինը անտիկ դարաշրջանում, տախտակ VII, VIII:

արանքով իրար վրա դրված երկու տորից: Դրանց հիմքը ուղղանկյուն սալ է: Առաջին խարիսխը կերտված է վարդագույն տուֆից և ունի հետևյալ չափերը. սալը՝ 42 x 40սմ, բարձրությունը՝ 10 սմ, առաջին բարձիկն ունի 13 սմ բարձրություն, երկրորդը՝ 10 սմ, վերին դարակիկի բարձրությունը 2 սմ է, դարակիկի վերին տրամագիծը՝ 29 սմ: Երկրորդ խարիսխը սպիտակ կրաքարից է: Սալի չափերն են 39 x 37սմ, բարձրությունը՝ 10սմ, առաջին բարձիկի բարձրությունը՝ 10սմ, երկրորդինը՝ 8սմ, բարձիկի վրայի դարակիկի բարձրությունը՝ 3սմ, տրամագիծը՝ 27սմ: Երկու խարիսխների ներքևի բարձիկի տրամագիծը մեծ է վերևինի համեմատ: Խարիսխների կողապատկերը հիշեցնում է աստիկյանը, չնայած բացակայում են դարակիկը և բաժանող երկու բարձիկները: Վերջերս նույնատիպ խարիսխի օրինակ հայտնաբերվել է նաև Շիրակավանում³⁸ [Աղ. IV, նկ. 9]: Նկատի ունենալով, որ նույն Դվինում, ուշ շերտում հայտնաբերվել են և աստիկյան խարիսխներ, կարելի է ենթադրել, որ վերը նշվածները նախաատիկյանի տեղական տարբերակ են:

Եզրահանգում. Ծագումնաբանորեն կապված լինելով տեղական շինարվեստի ավանդույթներին՝ խարիսխները մ.թ. Iդ. փոփոխության են ենթարկվում Հայաստանը շրջապատող հելլենիստական երկրների մշակույթների ազդեցության ներքո: Համաձայն կատարված ուսումնասիրությունների տվյալների՝ աստիկյան և տորածն խարիսխները հիմնականում թվագրվում են մ.թ.ա IIIդ. - մ.թ. III դարերով: Շատ տարածքներ, որտեղ այդ խարիսխները միասնաբար տարածված էին, միաժամանակ գտնվում էին սերտ քաղաքական և պատմամշակութային փոխհարաբերությունների ոլորտում:

Հետևաբար, աստիկյան և տորածն խարիսխներին առկայությունը Հայաստանում, որոնք իրենց հերթին ներկայացված են տեղական նախատարատեսակներով, պատահական է: Լինելով հարևան երկրների հետ մշակութային ամենատարբեր մակարդակի կապերի մեջ՝ Հայաստանն ընդունում է այդ ժամանակաշրջանին բնորոշ ճարտարապետական ձևերի ազդեցությունները և վերամշակում դրանք տեղական ինքնատիպ շինարվեստի ավանդույթների հիման վրա:

Սյունա-հեծանային համակարգի օգտագործումը շարունակվում է մոնումենտալ շինություններում ինչպես վաղ, այնպես էլ ուշ միջնադարում: Վաղմիջնադարյան եկեղեցիների շքամուտքերը ձևավորում էին որմնասյուներով, որոնց խարիսխներն իրենց գեղարվեստական արտահայտչական ձևերով և համաչափությամբ հիշեցնում էին տորածն անտիկ խարիսխները /Երերույք³⁹ (IV-Vդդ.)/,

³⁸ Տվյալ նյութը սիրով մեզ է տրամադրել հնագետ Համագասպ Խաչատրյանը, ինչի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

³⁹ **Азатян Ш.** Порталы в монументальной архитектуре Армении IV-XIV вв., Е., 1987, стр.12,58,60, рис. 30.

Դվինի գահասրահի սյուների խարիսխները ⁴⁰ (IV դ.) /նկ.35,36,37/: Դրանք ունեն 2.5 անգամ ավելի բարձր սալ, քան տորը (վերջինս հիշեցնում է անտիկ տորերի ձևը), բայց տորի վրա բարձրացող մասը՝ բաղկացած դարակիկներից և սկոցիայից, հիշեցնում է աստիկյան խարիսխների ձևերը:

Նմանատիպ խարիսխներ ունի նաև Զվարթնոցի կամարաշարը (VIIդ.)⁴¹ /նկ. 38/: Գառնի ամրոցի Սբ Սիոն եկեղեցու որմնախարիսխները (VIIդ.)⁴² /նկ. 39/ ունեն բավականին բարձր սալ, որի վերևի մասն ավելի բարձր է և բաղկացած է երկու փորվածքից ու բեկվածքից: Այդ խարիսխները բավականին հարուստ մշակված տրամատ ունեն: Դրանց տորածն ներքնասալի վրա դրվում էին աստիկյան խարսխի տարրերը: Դվին քաղաքի կենտրոնական թաղի ավերակ շենքի պեղումների ժամանակ ի հայտ է եկել խարիսխ (VIIդ.) /նկ. 39/, որն իր շրջանաձև մասից քառակուսու փոխարկվելու միջանկյալ տարածության անկյունների վրա ունի չորս ուռուցիկ եռանկյունաձև զարդեր: Նման տիպի խարիսխներ հանդիպում են Մշկավանքում (13դ.), Գեղարդում (13դ.) և այլ հուշարձաններում:

Այդպիսով, սկսած վաղ միջնադարից, հայկական շինարվեստում նկատվում են անտիկ տորածն խարիսխների տարբեր տիպերի գեղարվեստական յուրահատուկ մեկնաբանություններ՝ հիմնված աստիկյան և տորածն խարիսխների վրա:

⁴⁰ **Հարությունյան Վ.**, Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, էջ. 62, նկ. 12:

⁴¹ **Մնացականյան Ս.**, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, գծ. 4, 15:


Աղյուսակ 1



1



2




3




4



6





6 a



5



7




2




3




4



5



6



БАЗЫ КОЛОНН АНТИЧНОЙ АРМЕНИИ

Канециан А. Г.

Ключевые слова: *стоечно-балочная система, типы торовидных баз, типы аттических баз, структурные элементы, капитель, культ, дворец.*

Одним из важнейших элементов конструкций здания являются стойки-опоры, часто поддерживающие перекрытие. Стойки колонн в ряде сооружений, очевидно, из-за трудоемкости обработки камня делались из дерева. Для предохранения деревянных стоек-колонн от порчи, а также для создания сильного основания для передачи тяжести от стоек и перекрытий на грунт, они ставились не непосредственно на землю, а на каменные основания. Основания под стойками-колоннами были различны.

Проведен анализ развития форм баз. Беря свое начало с урартских баз под воздействием культуры окружающих Армению эллинистических стран, базы приобретают разнообразные формы. На территории современной Армении, в поселении Бениамин были обнаружены базы VI-V вв до н.э., персепольского типа, а в том же перестроенном сооружении в IV-III вв до н.э. появляются базы прототоровидного типа, которые своей художественной выразительностью, являются слиянием культур Малой Азии и ахеменидского Ирана. Со II в. до н.э на территории исторической Армении широкое распространение получила торовидная форма баз (Арташат, Армавир, Гарни, Ширакаван, Капс, Спитак, Бениамин, Мохраблур, Эчмиадзин и др.). Эта форма характерна для всех Восточных стран. Происхождение торовидных баз, составляющих основу восточного ордера, явно азиатское и своими истоками восходит к ассирийской и раннеурартской архитектуре. Исследован и обобщен ряд найденных торовидных баз и проведена их классификация по художественной выразительности форм. Высекались они из различных каменных пород – туфа, базальта, белого известняка, мрамора, порфирита. Диаметр опорной плоскости баз также различен в зависимости от употребления деревянных или каменных колонн.

Наряду с разнообразными торовидными базами обнаружены четыре базы, так называемые “аттические”, относящиеся к первым векам н.э. (Гарнийский храм, Двин, Арташат). Эти базы своей профилировкой приближаются к классическим аттическим базам. Исследование показало, что как торовидные, так и аттические базы имели свои местные протоварианты. Их профилировка в эллинистический период подверглась изменению под воздействием культуры окружающих Армению стран.

BASES OF COLUMNS OF ANCIENT ARMENIA

Kanetsyan A. G.

Key words: *load-carrying construction, antique toroidal base types, antique atticbase types, structural elements, capital, cult, palace.*

One of the most important elements of the building construction is the support pillars that often support the ceiling. Shafts of columns in a number of buildings were made of wood, evidently, because of the complexity of stone processing. To protect wooden columns from damage, as well as to create a strong foundation for transferring gravitation force from pillars and ceilings to the ground, the columns were not placed directly on the ground, but on stone bases. The bases under the pillars were different.

The analysis of the development of forms of bases was carried out. Taking its origin from the Urartian bases, the bases have taken on various forms under the influence of the culture of the Hellenistic countries surrounding Armenia. On the territory of modern Armenia, in the Benyamin settlement, the bases of the 6th-5th centuries BC, of the Persepolian type, were discovered. While bases of the toroidal prototype appear in the same reconstructed structure in the 4th-3rd centuries BC. By their artistic expressiveness, these bases are a symbiosis of the cultures of Asia Minor and Achaemenid Iran.

From the 2nd century BC in the territory of historical Armenia, the toroidal form of bases has become widespread (Artashat, Armavir, Garni, Shirakavan, Kaps, Spitak, Beniamin, Mohrablur, Echmiadzin, etc.). This form is typical for all Eastern countries. The origin of the toroidal bases that form the basis of the Eastern order is clearly Asian and goes back to Assyrian and Early Urartian architecture.

A number of found toroidal bases were investigated and summarized; the classification of these bases was carried out by their artistic expression of the forms. The bases were carved out of various stone rocks such as tuff, basalt, white limestone, marble, porphyrite. The diameter of the support plane of the bases is also different depending on the use of wooden or stone columns.

Along with a variety of toroidal bases, four bases, the so-called "Attic", dating back to the first centuries AD, were found (Garni temple, Dvin, Artashat). By their profiling, these bases approach the classical Attic bases. The study showed that both toroidal and attic bases had their local prototypes. Their profiling in the Hellenistic period underwent a change under the influence of the culture of the countries surrounding Armenia.

References

1. **Azatyán Ch.**, Portali v monumentalnoy arkhitekture Armenii IV-XIVvv., Yerevan, 1987 (**In Russian**).
2. **Arakelyan B.**, Osnovnie rezultati raskopok drevnego Artashata v 1970 -1973, Yerevan, 1974, (**In Russian**).

3. **Areshyan G., Simonyan H., Sargsyan G., Kocharyan G., Ohanyan H.** Hajagitakan kentroni 1977-78 tt. dashtajin hnagitakan ashkhatanqneri, // Banber Yerevani hamalsarani, 2, 1979 **(In Armenian)**.
4. **Demirkhanyan A.** Severo-vostok Yerevana v epokhu Artashesidov (fragment materiallnoyi dukhovnoy kulturi po dannym antichnogo poselenia v Avan-Arindzhy / Iiv. do n.e.–I v.n.e./ **(In Russian)**.
5. **Ghafadaryan K.** Argishtikhinili qaghaki chartarapetuthiun, Yerevan, 1984 **(In Russian)**.
6. **Khalilov J.** Raskopki na gorodishhe Khinisli, pamjatniki drevney Kavkazskoy Albanii, SA, 1962 **(In Russian)**.
7. **Khalilov J., Babaev I.** O gorodakh drevney Kavkazskoy Albanii, SA, 1974 **(In Russian)**.
8. **Khachatryan Zh.** Sisiani dambaran@ (m.t.a.I dari erkrord kes), Yerevan, 2009 **(In Armenia)**.
9. **Khachatryan H.** Beniamini antiq dastakerti hellenistakan zhamanakachrjani chartarapetutiun@ (masn I), //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan ashkhatutyunner II, 1999 **(In Armenia)**.
10. **Khachatryan H.** Beniamini antiq dastakerti hellenistakan zhamanakashrjani chartarapetutiun@ (masn II) //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan achkhatutyunner, Gyumri, III, 2000 **(In Armenian)**.
11. **Kanetsyan A.** Planirovka zhilogo doma v Dzhrapi //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan ashkhatutyunner, Gyumri, II, 1999 **(In Russian)**.
12. **Karapetyan I., Kanetsyan A.** Armaviri 2002 yev 2005tt. peghumner@, Hin Hajastani mshakujt@ XIVd, 2008, p.161-168 **(In Russian)**.
13. **Karapetyan I.** Karchaghburi peghumner@ (1975-1978), //Patma–banasirakan handes, 3, 1979 **(In Armenian)**.
14. **Kocharyan G.** Dvin@ antic darashranum, //Dvin III, Yerevan, 1991 **(In Armenian)**.
15. **Kruglikova I.** Delberjin (raskopki 1970-1972gg.), chast I, M, 1974 **(In Russian)**.
16. **Jessen A.** Iz istoricheskogo proshlogo Milsko-Karabakhskoj stepi, MIA, 1965 **(In Russian)**.
17. **Litvinskiy B., Zejmel M.** Kamennie bazi kolonniy Vakhchskoy dolini, Iz. OONAN Tadzhiqistana, 1960 **(In Russian)**.
18. **Harutyunyan V.,** Dvin I, Dvini V-VII dareri chartarapetakan hushardzaner@ Yerevan, 1950 **(In Armenia)**.
19. **Markuzon V.,** Arkhitektura arkhaischeskoy epokhi (750 - 480 gg. 1Do.n.e.), // Vseobchaya istoria arkhitekturi, Moskva, 1973 **(In Russian)**.
20. Materiali po arkheologii Kavkaza (ekspedicia imperatorskogo Moskovskogo Arkheologicheskogo obshestva), Moskva, 1911 **(In Russian)**.
21. **Mnacakanyan S.** Zvardnoci yev nujnatip hushardzannery, Yerevan, 1971 **(In Russian)**.
22. **Oganesyan K.** Arkhitektura Erebuni, Arin-berd I, ARA, 9, Yerevan, 1961 **(In Russian)**.
23. **Oganesyan K.,** Krepost Erebuni, Verevan, 1980 **(In Russian)**.

24. **Pichikyan I.** Torovidnie bazi (proizskhozhdenie, khronologia)//Kultura i iskusstvo narodov Sredney Azii v drevnosti i srednevekove, M,1979 **(In Russian)**.
25. **Pugachenkova G.** Arkhitekturnie pamytniki Nisi, TIOTAKՅ, 1949, том.I **(In Russian)**
26. **Pugachenkova G.** Khalchaan: K problem khudozhestvennoy kulturi Severnoy Baktrii, Tashkent, 1966 **(In Russian)**.
27. **Pugachenkova G.** Iz istorii antichnoy kulturi Uzbekistana, Tashkent, 1973 **(In Russian)**.
28. **Pugachenkova G.** Puti razvitiya yuzhnogo Turkmenistana pori rabovladeniya i feodolizma, TIOAKՅ, 1958 **(In Russian)**.
29. **Qalantaryan A.,** Dvini kentronakan taghamasi 1971-1973t.t. peghumner@, //Lraber, 1975 **(In Armenia)**.
30. **Sainyan A.,** Arkhitektura antichnikh sooruzheniy Garni, Yerevan, 1988 **(In Russian)**.
31. **Ter-Martirosov F.** K stratigrafii Armavirskogo kholma, //VON, 1974 **(In Russian)**.
32. **Ter-Martirosov F.,** Shirak v epokhu klassicheskoy antichnosti, //GAA Shiraki hayagitakan kentroni Gitakan ashkha tutjunner, Gyumri, II, 1999. p. 35-36 **(In Russian)**.
33. **Vitruviy,** Desyat knig ob arkhitekture, Moskva, 1936 **(In Russian)**.
34. Vseobshaya istoria arkhitekturi, t. I, Arkhitektura drevnego mira 2-eizd., 1973 **(In Russian)**.

Ընդունվել է՝ 03.03.2020

Գրախոսվել է՝ 05.04.2020

Հանձնվել է տպ. 20. 11.2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Ամինիա ԿԱՆԵՑՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ
գիտաշխատող, ճարտարապետ, էլ. հասցե՝ amina-kanetsyan@mail.ru